ԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՄԱՐՏ 1, 1895. ԹԻՒ 4 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 91

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St., New York, N. Y. Vol. V, 1895

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, ԲԱԶԱՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ին

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Ամեն. Տ. Մատթէոս Պատրիարք Իզմիրլեանի.—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ա. Անգլեհայկական Ընկերակցութիւնն.
Բ. Ուստըրի բողոքական Հայոց համար եկեղեցի
Գ· Ափ ի Բերան
Դ. «Հայք» և Կեդրոնի Խնդիրն—

Հայքի կրօնքն ու եկեղեցին.— Մեր թերութիւնք.— Հրաւէր միութեան առ գործիչս. Նամակ Փրովիտէնսէ.— Առ Ամենայն Հայս.— Բաց Նամակ ի Պուլկարիոյ.— Ընդհանուր շըրջաբերական Հայոց Ազգային Միութեան Շիքակոյի.— Նամակ Պոսթընէն·— Հերքում.— Նամակ առ խմբագիրն—Հայքի թղթակցութիւնք—Թրքաց դէմ զայրացման միթինկ ի Նիւ Եորք — Այլ և Այլք։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ա

ԱՆԳԼԵՒՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆ

Լոնտոնի Անգլեհայկական Ընկերակցութիւնն, որ մեր դատին աշխատող զօրաւոր միակ ընկերութիւնն է Անգլիոյ մէջ, կոչում կ'ընէ մերայնոց օգնել նիւթապէս, որպէս զի կարենայ միթինկներու և հրատարակութեանց համար դրամական դիւրութիւն ունենալ։ Արդարեւ մեզի չի վայլեր սպասել որ նորա անգլիացի անդամներն խոշոր գումարներ իրենց քսակէն դնեն մեր Խնդրոյն համար։ Նոքա արդէն շատ ժամանակ կը զոհեն և ոչ սակաւ դրամ, թէև վեհանձն լռութեամբ կ'անցնին աստ վերայէ։ Այս երկու ամիներուս մէջ սաստիկ գործունէութեամբ զբաղելու ստիպուած է ընկերակցութիւնն, և հարկ է որ օգնութիւնք ամենայն փութով հասցուին։ Գանձապետի հասցէն կայ յայտարարութեան մէջ զոր կը հրատարակեմք ներկայ թուով։ Կրնան յօժարողք իրենց նպաստներն ուղղակի յըղել նշանակուած պանդոյին՝ յանձնարարեալ նամակաւ՝ եթէ ամերիկեան պանքնօթ յղեն, և պարզ նամակաւ՝ եթէ մընի օրտըր ուղարկեն։

Բ

ՈՒՍՏԸՐԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Զարմանքով լսեցինք թէ Ուստըրի մեր բողոքական եղբարք առանձին եկեղեցւոյ շէնք մի կառուցանել կ'ուզեն։ Թէպէտ Ամերիկացի եկեղեցիք ծախուց մեծ մասն վճարել յօժարին իսկ, ծախքի մեծ բաժին մի կը մնայ մերայնոց։ Ինչ պէտք կայ զատ եկեղեցի ունենալու, մինթէ Ուստըրի մէջ Ամերիկացւոց մէկ եկեղեցին չե՞ն կարող գործածել, ինչպէս ցարդ կը գործածէին, և չե՞ն յիշեր թէ Ուստըրի Ս. Փրկիչ եկեղեցւոյն համար այնքան սաստ ազգային դրամնէն ելնելէ յետոյ՝ իբր 3,000 տոլարի պարտք կը մնայ։ Թուրքիոյ մէջ չափազանց շատ դրամ ծախսած եմք բոլոր Հայերս դարերէ ի վեր եկեղեցւոյ շէնքեր կառուցանելու համար, և չափազանց քիչ՝ դպրոցի հիւանդանոցի և մամլոյ համար· պէ՞տք է այդ ընթացք շարունակել նաև Ամերիկայի մէջ։ Մանաւանդ ազգին այս ճգնաժամուն մէջ երբ ոչ թէ հազարաւոր այլ միլիոնաւոր տոլարներ հարկաւոր են անմիջական պահանջմանց գոհացում տալու համար, և երբ սովն, հըրտախան, կոտորածն և բանտն այնքան լայն բացած են իրենց բերաններ, ոչ թէ եկեղեցիներ կառուցանելու ժամանակ է այլ վաճառելու՝ եթէ հարկ է։

Կը խնդրեմք որ մեր բողոքական ազգայինք լաւ խորհին այդ բանին ձեռնարկելէ առաջ։

Գ

ԱՓԻ ԲԵՐԱՆ

Խմբագիրներ երբեմն երբեմն «Հայքի» դէմ արձակած են կրօնական մոլեռանդութեան ժահրոտ զրախօսութիւններ, և մի քանի տխմար երիտասարդք ևս նոցա օրինակին հետեւած են։ Մեր մէջ դեռ չատուոր են որք ոչ թէ մարդիկ ու իրեր ճանաչել կուզեն որպիսի որ են, այլ անկիրթ ատելութեան ոգւով վառուած՝ բծախնդրութեամբ և բծադրութեամբ կը պարապին։ Մրոտելու գործն ոմանց անյաղթելի բնազդման մէջ է։ Այդ պիսեաց համար չգրեցինք այն յօդուածն որ ներկայ թուոյ մէջ կը հրատարակուի «Հայքի Կրօնն ու Եկեղեցին» խորագրով։ Ոևէ քանակութեամբ ապացուցում և լուսափայլ անկեղծութիւն չեն բաւեր գոհ անել այդ կարգի փոքրամիտներն։ Նոքա ափ ի բերան չեն լինիր երբէք։ Ընդհակառակն՝ մեր խմբագրական բացատրութեան մէջ իրենց բնազդական ատելութեան նոր նիւթ պիտի գտնեն։ Մեր յօդուածն ուղղուած է անոնց միայն որք ճշմարտութիւնն ճանաչել կ'ուզեն, և որք, չնորհիւ իրենց անկեղծ բնաւորութեան, կարող են անկեղծութիւնն ճանաչել ու սիրել։

Դ

ԿԵԴՐՈՆԻ ԽՆԴԻՐՆ ԵՒ «ՀԱՅՔ»

Մեր թղթակից ուղեւոր կը գրէ թէ Եւրոպիոյ մեր հայրենակիցներէն ոմանք մեղադրած են զմեզ թէ կ'ուզեմք որ ՀԱՅՔ լինի բերան այն կեդրոնին որոյ հարկն կը ջատագովեմք։ Այս մեղադրութեան կը պատասխանեմք թէ ՀԱՅՔ չի ցանկար պաշտօնական բերան եղանիլ կեդրոնին։ ՀԱՅՔաւելի ազդու կը լինի եթէ իւր իսկական հանգամանօք և ոգւովն նրկատուի ազգի յառաջադէմ մասին խորհրդոց և զգացմանց հաւատարիմ արձագանքն քան եթէ անոր հակառին դրօշմուի մի պաշտօնական անուն։ Այս տեսութեամբ ՀԱՅՔ ոչ պէտք և ոչ ցանկութիւն ունի պաշտօնական կոչման։

Թերեւս լաւ կը լինի որ այս առթիւ պատասխանեմք անոնց ևս որք ասա անդ զրուցեր են թէ «Հայքի» խմբագիրն կեդրոնի մի կազմաւորումն կը ջատագովէ որպէս զի ինքն ալ անդամ լինի անոր։ Այս ենթադրութիւն սխալ է։ Խմբագիրն չունի այդ ցանկութիւն։ Նա ամերիկայի մէջ կատարելու շատ գործ ունի ազգային, և Ամերիկայի մէջ ութ տարի բնակած լինելով մասնաւոր յարմարութիւններ ստացած է Ամերիկայեաց մէջ աշխատելու յօգուտ հայկական խնդրոյն։ Միւս կողմանէ աւելի ծանօթ և կարող մարդիկ ունիմք յԵւրոպա, Ջերազ, Թումայեան, Ցակոբեան, Փորթուքալեան ևն. որք լիուլի բաւական են կեդրոնին տալու բարձր հեղինակութիւն՝ առանց մեր մասնակցութեան։

ՀԱՅՔ այժմ 50 բաժանորդ ունի ի Լին ուր 250 ազգայինք հաղիւ կան։ Բաժանորդք ամեն ուրեք կ'աւելնան շարունակ։

ՀԵՐՔՈՒՄ

Պոսթոն, Փետր. 21, 1895

Տէր Խմբագիր,

Պատ. ՀՅԱՄԻ վերջին թուոյն մէջ զիս հնչակեան ներկայացուներդ կարի յուզեց, արդ կը խնդրեմ ի ձէնջ յանուն ճշմարտութեան սոյն հերքմադրոյն որոշ անկիւն մի տալ։

Ի յայտարարութիւն հայ ժողովրդեան կը ծանուցանեմ թէ այլևս ո՛չ առաջնորդ և ո՛չ հետեւողեմ հնչակեան թռուցիկ, անհիմն և դաւադիր կազմակերպութեան։

Կը յայտարարեմ որովհետև զայս կը խնդրէ ոգին հայ հայրենեաց։

Զայս կը պահանջեն ոգիք Սասնոյ քաջաց նահատակելոց մերոց։

ՎԱՐԴ ՎՐՈՑՐ

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտատը փոսթի միջոցաւ խմբագրութեան նրս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ հիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

«ՀԱՅՐԻ» ԿՐՕՆՔՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐ

ՊԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՊԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Ա.

Հինգ տարիէ ի վեր ՀԱՅՐ կը հրատարակուի ի Նիւ Եորք և կը շրջաբերի գրեթէ բովանդակ հայ աշխարհին մէջ։

Թէպէտ Նիւ Եորք հայ կեդրոն մի չէ և կեդրոններէն հեռի է, այսու ամենայնիւ ՀԱՅՐՆ կրցաւ ապրիլ և անընդհատ հրատարակուիլ, կրցաւ ազգին մշակուած մասէն ճանչցուիլ իբրեւ ազգային բերան, և յարգելի հանդիսացաւ յաչս բանիմաց ազգայնոց ընդ հանուր։

ՀԱՅՐԻ հակառակորդք ոմանք բուն գետնի վերայ մրցելէ ակարացած՝ դիմեցին կողմնակի միջոցներու և քանի՛ քանի՛ անգամ հռչակեցին թէ ՀԱՅՐԻ խմբագիրն բողոքական է։ Մինչև անգամ Հնչակի խմբագիրներն, որք կրօնի և եկեղեցւոյ չեն ընծայեր այնքան յարգ որքան մի խնձորի, անցեալ օր իրենց «Ապտակ» անուն օրկանին մէջ նոյն գծծութեան դիմեցին կատակաբանութեան ձևին տակ՝ թէ ՀԱՅՐ հոգեւարքի մէջ լինելով Հայր Տէրունեան մերժեր է հաղորդութիւն տալ որովհետև «անոր խմբագիր Գաբրիէլեանը բողոքական է։» Այս հրատարակութեամբ Հնչակ կ՚ուզէ կրօնական մոլեռանդութիւն արծարծել ի վնաս «Հայքի», որուն յարաճուն ոյժն իրեն վախ ներշնչելսկսած է ժամակէ մ՚ի վեր։

Արդէն Արմէնիայի զրախօսութեանց պատասխանելով յայտարարած եմք թէ ՀԱՅՐ, իբրեւ քաղաքական թերթ, «ոչ լուսաւորչական, ոչ բողոքական և ոչ էլ կաթոլիկ լրագիր է։ ՀԱՅՐը գերազանցապէս Հայոց լրագիր է։» (Տես «Հայք» 1893 թիւ 5։)

«Հայք» ուրեմն կրօնական կամ եկեղեցական օրկան մի չէ, այլ քաղաքական։ Բայց այն չափով որով Հայաստանեայց Ս. եկեղեցին ազգային նշանակութիւն ունի, ՀԱՅՐն ալ, իբրեւ ազգային լրագիր, Հայ եկեղեցւոյն ազգային դերին վերաբերութեամբ ունեցած է ի սկզբանէ անտի իւր որոշ դիրքն։ Ընթերցողք գիտեն զայդ։ Լուսամիտ ազգայինք տեսած են թէ ՀԱՅՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ է, ոչ թէ բողոքական կամ կաթոլիկ։ Տիար Վարդ, իբրեւ յայտնի իրողութիւն մի չօչափեց Լինի Հայոց ընդհանուր ժողովոյն մէջ յայտարարելով թէ «Հայքն» Հայ եկեղեցին ու Վարդանն կը ներկայացունէ։» Այո՛, այդ ճշմարիտ է, «Հայք» իբրեւ ազգային հանդէս, իւր ազգային հանգամանաց մէջ էականօրէն կը պարունակէ լուսաւորչական բնաւորութիւն, և կը պարունակէ զայն ոչ անորոշ և թոյլ կերպով այլ յայտնի, զօրաւոր կերպով, ճիշդ որպէս թէ անոր անօրէնն լուսամիտ և նուիրուած մի հայ եպիսկոպոս լինէր։

Հակառակորդաց զրախօսութիւնք ունեցան սակայն տեսակ մի օգուտ։ Ազգայնոց ոմանք կասկածելով և ոմանք մինչեւ իսկ հաւատալով թէ ՀԱՅՐ բողոքական օրկան մ՚է, նորէն բաժանորդ գրուեցան ու յարգեցին զնա՝ այն լուսամիտ նկատողութեամբ թէ կաթոլիկ կամ բողոքական Հայեր ալ կարող են հայրենասէր լինիլ և քաղաքական ազգօգուտ թերթ հրատարակել. թէ յիմարութիւն կը լինի դոցա ծառայութիւններն չգնահատել մինչդեռ ոչ-հայ, այլ բոլորովին օտարազգի բողոքականներու և կաթոլիկներու հայօգուտ ծառայութիւններն կը գնահատեն։ Այսպէս խորհիլ՝ նշան է հասուն դատողութեան և իբրեւ այնպիսի՝ շատ քաջալերական է արդարեւ ազգի մտային վիճակին նկատմամբ։

Եւ որովհետեւ մինչև այս կէտ առաջնորդուեցանք մեր ներկայ յօդուածի մէջ, աւելորդ չի լինիր յաւելուլ և զայն՝ թէ մեք բողոքականութեան ու բողոքական Հայու չեմք նայիր մինոյն աչօք։ Բողոքականութեան սկզբունքն է անհատին ազատ քննութեան իրաւունքն կրօնական խնդրոց մէջ. և ի Գերմանիա ծնունդ առած այդ փառաւոր սկզբունքն՝ կրօնական շրջանէն անցաւ ի քաղաքականն և Անգլիական ու Ֆռանսական մեծ քաղաքականյե-

զափոխութիւններն յառաջ բերաւ։ Ուրեմն մեր երբեմնի դիմախօսութիւնն ոչթէ բողոքականութեան սկզբունքին դէմ եղած է այլ «հայ» բողոքականութեան դէմ։ Ինչո՞ւ։—վասն զի մեր եկեղեցին արդէն իւր գաւակաց ազատ քննութեան և դատողութեան իրաւունքն կաչկանդած էր։ Աստուաշունչ գրոց ընթերցումն հասարակ ժողովրդեան արգիլած չէր։ Ուրեմն Գերման բողոքականութիւնն պապերու հոգեւոր բռնապետութեան դէմ եկաւ ի ծընունդ և արագապէս աճեցաւ։ Բողոքականութեան այս վսեմ սկզբունքէն դուրս ուրիշ արարողական բարեփոխութիւնք երկրորդական կարեւորութիւն միայն ունին, և բարեփոխութիւնքն իսկ դարձեալ բարեփոխման կարօտ են։ Գալով բողոքական միսիոնարաց գործին մեր մէջ, կ'ասեմք թէ նոքա նոր եկեղեցական օտար դրութիւն հաստատելով Հայոց մէջ, ողբալի սխալ մի գործեցին։ Մեր եկեղեցին արդէն ի սկզբանէ պահած էր անհատական ազատ քննութեան փառաւոր ըսկզբունքն, հետեւապէս պէտք ունէր միայն մշակուած և լուսամիտ կղերի, ինչպէս որ մինչև այսօր ալ այդ է մեր եկեղեցւոյ էական պէտքն։

Միւս կողմանէ չեմք արհամարհեր հայ բողոքականներն։ Եթէ կ'ուզեմք որ Հայ բողոքականութիւնն դարձի գայ, պէտք է որ հայ բողոքականներն իբրեւ մեր ճշմարիտ եղբայներն սիրեմք, և նոցա մէջ բորբոքած հայրենասիրական եռանդն աւելի արծարծեմք։ Մեծ յիմարութիւն արած կը լինիմք եթէ ասեմք թէ նոքա անկեղծ չեն։ Խաւարամտութեան ապացոյց կուտամք եթէ այն կարծիքն յայտնեմք թէ բողոքական Հայն հայ չէ։

Նոյն քաղաքականութեան պէտք է հետեւիմք հանդէպ կաթոլիկ Հայոց։ Թէպէտ ուսեալ Հայերն չկրնան անգիտանալ թէ բողոքականութիւն և հայ եկեղեցի խորապէս նոյն ազատ ոգին կը կրեն, և հետեւապէս հակառակորդն են պապական սկզբունքին որ կը պահանջէ զի Ս. Պապն համօրէն քրիստոնեայ եկեղեցեաց տիեզերական պետն ճանչցուի և նորա վճիռներն ու որոշումներն ի մասին կրօնական վարդապետութեանց իբրեւ անսխալ ընդունուին— թէև այդ պապական պահանջն իբրեւ հակառակ հայ եկեղեցւոյ սկզբանց, Քրիստոսի ոգւոյն և նոյն իսկ դարուս գիտական ոգւոյն, մերժելով մերժեմք— տակաւին պարտաւոր եմք սիրել և յարգել մեր կաթոլիկ հայ եղբայրներն, և անոնց մէջ հրահարել ազգային ոգին, զնահատել և գովել նոցա հայրենասիրական աշխատութիւններն։

Պէտք է չշփոթեմք բողոքականութիւնն, հայ բողոքականութիւնն ու հայ բողոքականներն իրարու հետ։ Եւ ոչ ալ կաթոլիկութիւնն հայ կաթոլիկներուն հետ։ Չշփոթենք հայ կաթոլիկն հայ պապականին հետ։ Ս. Պապն զիւր իշխանութիւն աւելի կրնայ յուսալ տարածել Թրքահպատակ և Թշուառ Հայոց մէջ քան եթէ Հայաստան ռուսական կամ անգլիական թեւարկութեան ներքոյ ինքնօրէն նահանգ լինի։ և ուստի սկիզբէն անհամակիր եղաւ Հայոց պահանջմանց և Ազարեան՝ կաթոլիկ Հայոց պապական պատրիարքն՝ յանդուգն քայլ առաւ Թրքաց նպաստաւոր։ Բայց կ. Պոլսոյ լուսամիտ հայ կաթոլիկներն ամեն կողմէ կշտամբեցին Ազարեանի հակահայ ընթացքն, և Ազարեան վախնալով թէ այդ հայասիրտ կաթոլիկներն բոլորովին կը դառնան հայ եկեղեցւոյ ծոցն, սկսաւ ջանալ դարմանել իւր սխալն, և Ս. Պապն իսկ ազդուեցաւ։

Կը յուսամք թէ այս տողերով բացատրած եղանք ՀԱՅՐի քաղաքականութիւնն դէպ ի հայ բողոքականներն և հայ կաթոլիկներն։ Եթէ իմաստուն կերպով շարժիմք, կրնամք բողոքական միսիոնարներէն անգամ շատ օգուտ քաղել ի նըպաստ մեր դատին։ Նոցա դէմ գրաբառնել միայն է մեզ մանաւանդ այժմ երբ Ամերիկայէն զօրաւոր և գործնական համակրանքի կը սպասեմք։

Բ

ՀԱՅՐ կրնար, իբրև ազգային թերթ, լուսաւորչական կացք և ընթացք ունենալ, սակայն և այնպէս գանուիլ ընդ արնօրինութեամբ բողոքական Հայու։ Կրնար այդպէս լինիլ, բայց իրօք այնպէս չէ։ ՀԱՅՐի խմբագիր Գաբրիէլեան ևս լուսաւորչական է։

Ճշմարիտ է թէ նա բողոքական պաշտամանց և կիրակնօրեայ դպրոցի իմացական հանգամանքէն սիսրժելով՝ պատա-

նի հասակին մէջ մտած էր բողոքական ժողովրդին մէջ, դէպք մի որ չէր կրնար տեղի ունենալ եթէ ազգային կղերն այնքան ողբալի տգիտութեան մէջ ընկղմեալ չլինէր— և այդ փորձառութեան շնորհիւ է որ այժմ կը հաւատայ թէ մեր ազգային եկեղեցւոյ մեծագոյն վտանգն տգէտ կղերն է ու պիտի լինի մանաւանդ ի դարուն մէջ՝ եթէ ընտիր եկեղեցականութիւն չհասցունեմք— : Սակայն մի քանի տարիէն, աւելի հասուն և բազմակողմանի քննութեամբ տեսաւ թէ բողոքականութիւն, թէև ազատական սկզբամբն պատուական, սակայն պապական ժողովրդոց մէջ ծնած ծայրայեղ դրութիւն մ'էր : Դիտեց նաև թէ ազգային եկեղեցին ոգւով բողոքական էր և կառավարութեամբ բաւական ժողովրդապետական :

Երիտասարդ Գաբրիէլեան իւր դասաղութեան այդ վիճակին մէջ թեթեւութեամբ դուրս չցատքեց բողոքական Հայոց շրջանակէն, բայց և ոչ կեղծաւորութեամբ թաքոյց իւր համոզումներն : Նա եկեղեցական խնդիրներն հայկական տեսակետէ դիտել սովրեցոյց բողոքականաց և ջանայ լինիլ նոցա մէջ խմոր ազգային զգացման : Մինչ Հայերէնի ուսուցիչ էր կեդրոնական Թուրքիոյ գալէֆին մէջ յԱյնթապ, «Աւետարերի» մէջ հարուածեց պապանձեցուցիչ փաստաբանութեամբ այն միսիոնարներն որք Կիլիկիոյ հայախօս բողոքականաց մէջ տաճկերէնն կը ծաւալէին իբրեւ կրօնական լեզու : Ապա հայերէնի ուսուցման ի գալէֆին աւելի կարեւորութիւն տալու հարկին վերայ պնդելով՝ վէճի բռնուեցաւ Նախագահ Թրօպրիճի հետ, և այդ պայքարի հետեւանօք հրաժարեցաւ ուսուցչական պաշտօնէն : Իւր ուսմունքն Բարիզի մէջ կատարելագործելու ժամանակ մի աշխատելէ յետոյ՝ վերստին հրաւիրուեցաւ յԱյնթապ՝ ուսուցանելու : Երբ Կիլիկիոյ բողոքական եկեղեցիք և միսիոնարք ընդհանուր ժողով արին ի Մարաշ, Գաբրիէլեան իբրև պատուոյ անդամ հրաւիրուեցաւ մասնակցիլ ժողովոյն աշխատութեանց, և առիթ գտնելով ճառեց առաջի ժողովոյն թէ բողոքական դրութիւնն չի յարմարիր մեր ազգին և առաջարկեց որ խնդիրն լուրջ ուսումնասիրութեան առարկայ անելով վերադառնան առ հայկական դրութիւնն : Միսիոնարք ջանային կարճ կապել տալ գճառն, որ սակայն ժողովոյն քուէարկութեամբ չարունակուեցաւ : Միսիոնարք և հինաւուրց բողոքականք քրթմնջեցին դառնութեամբ թէ ի՛նչպիսի բողոքական է Գաբրիէլեան որ լուսաւորչականութեան դառնալ կը քարոզէ մեզ(*) : Այս դէպքէն իբր ամիս ու կէս յետոյ կը ստիպուի նա, լրատեսներ ունենալով գարշապարին, փախչիլ արտաքսման : Ինչ որ Մարաշի ժողովին մէջ խօսած էր՝ Բարիզէն կը յղէ առ Աւետարեր, որ իբրեւ ճշմարտակար կը մերժէ : Նիւ Եորքէն կը յղէ զնոյնն Արեւելքի, ուր կը հրատարակուի : Եւ ահա Աւետարերի մէջ դիմախօսութիւն դիմախօսութեան կը յաջորդէ ամիսներով, մինչև որ թուրք կառավարութիւնն՝ դիտելով պայքարին հայկական բնութիւնն՝ կը հրամայէ վերջապէս :

Մեր փորձառութենէ բխող կարեւոր մէկ դաս մ'ալ այն է թէ իմորոն զանգուածին մէջ գտնուելով կրնայ ազդել : Եթէ այսօր բոլոր լուսամիտ բողոքականք և կաթոլիկք թողլով իրենց կրօնակիցներն՝ վերադառնային ի ծոց մայրենի եկեղեցւոյ, այնքան մեծ սխալ մի գործած պիտի լինէին որքան իրենց նախնիքն որք մայրենի եկեղեցիէն զատուեցան : Պէտք չէ երեւակայել թէ բովանդակ հասարակութիւնն մի քանի առաջնորդներու հետեւելով կը վերադառնայ յանկարծ ի ծոց ազգային եկեղեցւոյ : Նոր սերունդն է որ կ'աղդուի, և երկար թխսման կարօտ է նա : Գաբրիէլեան կը հաւատայ, առանց սնապարծութեան, թէ ազգային ուղղութեան միտեալ սաներու բազմութիւն մի ունի այժմ հայ բողոքական երիտասարդութեան մէջ, և այժմ կարող է վստահութեամբ յուսալ թէ նոքա պիտի չարունակեն գործն զոր ինքն սկսաւ :

Թող ընթերցողք չկարծեն թէ ՀԱՅՐի խմբագիրն այս շատախօսութիւնն յանձն կ'առնու այս անդամ՝ որպէս զի իւր վե-

(*) Ճշմարտութիւնն կը պահանջէ խոստովանիլ թէ ամեն միսիոնար այդպէս չէ : Մեք կը հանդիպեմք նոցա մէջ այնպիսիներ որք բնաւ չեն ուզեր մեր մայրենի եկեղեցիէն ոեւէ անհատ բաժնել, և երբ ոմանք կուգան փափաք կը յայտնեն բողոքական լիներու, միսիոնարք կը համոզեն զնոսա մնալ ի ծոց ազգային եկեղեցւոյն : Այս երեւոյթ նոր է և յաւէտ նորագոյն միսիոնարաց գտնուած տեղերն կը տեսնուի, ինչպէս ի Վան :

բայէն ի բաց քերէ բողոքական անունն։ Նմա ամենեւին փոյթ չէ թէ այլք ինչ անունով կը կոչեն զինքն։ Ինքն լուսաւորչական կը ճանաչէ զինքն, բայց եթէ ոմանց իբր հաճոյք կամ իբրև զէնք կը ծառայէ բողոքական կոչել զնա, հոգ չաներ բնաւ։ Նա կը փափաքի միայն բացատրել իւր դիրքն ամենայն անկեղծութեամբ։ Անձնապէս նա հասած է այն աստիճանին յորում կարող է, առանց ո՛և է եկեղեցւոյ և եկեղեցականի օգնութեան կարօտելու, ձգտիլ ի Ճշմարիտն, ի Բարին և ի Գեղեցիկն, այն է յԱՍՏՈՒԱԾ։ Բայց իբրեւ գործող և գրող Հայ՝ Նորա յարաբերութիւնն առ Հայ եկեղեցին է հարազատ և հաւատարիմ զաւակի յարաբերութիւն։ Իրեն համար մինչև անգամ կրնայ յիրաւի պահանջել զկոչումն ազգային եկեղեցւոյ առաքեալի առ բողոքական Հայս։ Ամեն անգամ որ տխմար և խաւարամիտ լուսաւորչականք բողոքական կ՚ասեն Նմա, իւր ուսերն անտարբերութեամբ կը թօթվէ Նա, և այն վստահութիւն ունի թէ երբ մեռնի, Հայոց Ս․ Կաթողիկոսն մի խաչ կը անկէ Նորա գերեզմանին վերայ իբրև հայ եկեղեցւոյ հարազատագոյն զաւակի։

Լոնտոն Փետր․ 17 — Կ․ Պոլսէն կը հեռագրեն ՝Քննիչ Յանձնաժողովն՝ տակաւին ի Մուշ կը մնայ։ Եւրոպացիներն ուզեցին մօտակայ գիւղերն այցելել, բայց իշխանութիւնք թոյլ չտուին՝ ասելով թէ օտար պատուիրակք հսկելու պաշտօն միայն ունին ոչ թէ ապացոյց հաւաքելու։ Սթամպոլի թղթակիցն Կ․ Պոլսէն կը հեռագրէ թէ կառավարական պաշտօնեայք որք խռովեալ վայրերն գնացին յառաջ քան Յանձնաժողովոյն ժամանումն, ձեռք բերին ազէտ ժողովրդի ստորագրութիւնքն պաշտօնագրոյ մի համար որով իբր թէ Սուլթանէն կը խնդրուէր ժանտախտի քառանթինան վերցունել, սակայն իրօք յայտարարութիւն մ՚էր թէ կոտորածի լուրերն մեծապէս չափազանցուած էին։ Սուլթանն, զՍ․ ԻԶՄԻՐԼԵԱՆ վախցունելու ի զուր աշխատելէ յետոյ, կը շողոքորթէ զնա այժմ, գովելով նորա փափկահուպ չօշափումն ազգային խնդրոց։ Փրոֆ․ Ջերազի լուր եկած է թէ Թրքեր հայ գիւղացւոց գաղթող խմբեր բռնած՝ մարդիկն սպաններ են և կիներն առևանգեր։

ՄԵՐ ԹԵՐՈՒԹԻՒՆՔ

Յորմէ հետէ Հայկական Խնդիրն օրինօք ճանչուեցաւ յԵւրոպայէ և ի Բ․ Դրանէ 1878ին, ի տես Դրան արհամարհոտ և արձակ բռնաբարութեան և դրժման իւր դաշնային խոստմանց, մի որոշ և հետ զհետէ աճուն շարժումն ձևացաւ Հայոց մէջ նպատակ ունենալով մղել զԵւրոպա գոնէ ի գործադրութիւն իւր անարգեալ դաշնագրաց ի Հայաստան։ Յայտնի պատճառաւք գլխաւոր մարմնացումն այս շարժման գոյացաւ յԵւրոպա և յԱմերիկա ուր Լրաթերթք ծաղկեցան և ընկերութիւնք կազմուեցան։ Տարակոյս չիք թէ շարժման թափ տուող Հայք ցոյց տուած են անկեղծ նուիրումն հայ փաստին և գործած են բաւական խոհեմութեամբ և կարողութեամբ։ Հայ Փաստին արդի վիճակն նոցա անձնուրաց գործունէութեան պանծալի յիշատակն է։

Սակայն ո՛չ ոք կրնայ ուրանալ թէ անցեալ վեշտասան ամաց յուզմունք և քրտնաջան աշխատանք ընծայած չեն մեզ այն լիակատար արդիւնքն զոր պարտէր տալ և թէ այս մասնակի անբերրութեան պատճառն են մեր պէս պէս գործնական թերութիւնքն։ Հայ ազատ մամլում յաճախ վիճաբանուած են գործոց և միջոցաց և քաղաքականութեան խնդիրք առանց արդեանց։ Վերջին դէպք ի Հայաստան լաւ պարզեցին թէ ի՞նչ են այս թերութիւնք, թէ ի՞նչ են այն քաղաքական մեթոդք և գործոյ եղանակք որք փորձով ապացուցուեցան իբրև անօգուտ, թերի և մինչ իսկ վնասաբեր։ Սոքա են դրական թերութիւնք։ Վերջին երևումն և հրապարակային վիճաբանութիւնն Հայկական Խնդրոյն նոյնպէս յառաջ բերաւ մի քանի պակասութիւններ մեր ազգային գործունէութեան և կազմակերպութեան մէջ որք կանխաւ բազմիցս նշմարուած էին սակայն անդարման թողուած։ Այս գրութեանս նպատակն է համառօտիւ ներկայացնել ինչ որ, ըստ ինձ, վերջին դէպք ապացուցին փորձով թէ են մեր ազգային դրական թերութիւնքն և ժխտական պակասութիւնքն և թելադրել ինչ դարման որ ինձ պատշաճ թուի առթին։

Մի խոշոր թերութիւն է անհոգ և խայտառակ բանդագուշանքն անմիտ և անպատասխանատու անձանց ոմանց որք հայրենասիրութիւն կը համարին սուտ յօդել, մեծամեծ ջարդել, և ազգային կարեւոր առանին լրեր շրջարերել օտարաց մէջ։ Ամեն ոք կը յիշէ խօսակցութիւնն Հայու ուրումն Պատ. Համլինի հետ յորում Հայն անհոգութեամբ և թեթեւութեամբ յայտարարած է ինչ որ էին ծանրը ամբաստանութիւնք ընդդէմ Հընչակեանց ի մասնաւորի, սակայն, առաջի աշխարհի, ուղղակի Հայ Ազգին դէմ, որք քրիստոնեական և մարդկային տեսակետով թէ դատապարտելի էին և թէ գարշելի։ Մեզ թուեցաւ յայնժամ թէ հերքումն և բողոքն որ ժայթքեցաւ Պօսթոնի թերթից մէջ ի դրչէն Յ. Կարապետեանի, պիտի հակակշռէր ծանր հետեւանքն հրապարակման այդ ցաւալի խօսակցութեան։ Սակայն Թուրքն արթնաբար օգտիլ փորձեց այդ թղթէն, և երբ քաղաքակիրթ աշխարհն այն ինչ ահաբեկուած էր Սասնոյ արհաւրովքն, Թուրքն անամօթաբար փիքացուց և երերցուց այդ Հայուն «խոստովանութիւնն» իբրեւ ապացոյց յեղափոխական չարամիտ խռովութեանց։ Թէև պարագայք Սասնոյ դիպացն կը հաստատէին զանտեղութիւն Դրան այս ճարպիկ պատրուակին, և թէև Պատ. Համլին ազնուաբար յառաջ գալով յանդիմանեց ղԴուռն և սմա միայն վերադրեց սխիրն, սակայն աշխարհ անգամ մի ընդունեցաւ կասկածոյ նշոյլն, և այլ ևս անհնար եղաւ ջնջել և փարատել դայնյոմանց։ Հէրալտի պախարակելի ընթացքի սկզբնական պատճառն ևս կրնամք հոն գտնել։ Ըստ ինձ այս թերութեան դարբանն չէ լոկ պարսաւել և խայտառակել զրաբան անհատ, այլ հաստատել մի հեղինակաւոր մարմին և հասկցնել աշխարհի թէ անպատասխանատու անհատից խօսքն նշանակութեան արժանի չեն։

Այլ մի հրէշային թերութիւն, որ յայս ճգնաժամում բաւական դժուարութիւն, եթէ ոչ ուղղակի վնաս, կը յարուցանէ, է անիսկեմ վարմունքն Հայոց ոմանց որք տեղի տուած են ամբաստանութեանս թէ Հայ Յեղափոխականք յոռեգոյն են քան զանիշխանականս։ Ես պատրաստ չեմ հաստատել կամ ուրանալ ճշմարտութիւնն նկատմամբ կարծեցեալ Հայ յեղափոխական մեթոդից զորոց կը խօսի Ընկերակցեալ Մամլոյ Թղթակիցն ի Հայաստան։ Ստոյգ թուի լինիլ թէ ոմանք Հայք անուղղայ եռանդեամբ գործած են ապօրէն դրամակորզութեան և եղեռնային գործեր որք դատապարտելի են և ամօթ Հայ Ազգին և դայթակղութիւն հայ հայրենասիրութեան։ Յուսամ թէ «Հնչակ» կ'ուրանայ գիտակից կամ երեսատու լինիլ այս անզգամ մեթոդից։ Եթէ այսպէս է, թող միանայ Հայ Ազգին մեծ մասին հետ յայտարարելով աշխարհի թէ այս եղեռնային գործք, եթէ գոյ են, անպատասխանատու և յուսահատ անհատից գործք են և թէ հայ յեղափոխական կուսակցութիւնն չի ճանաչեր զնոսա։ Հայ յեղափոխական կուսակցութիւնն գիտէ աւելի կանոնաւոր մեթոդներ և գիտէ ժամանակն սոցա գործադրութեան երբ փորձն կրնայ մնայուն ազդութիւն գործել։ Բայց եթէ այդ անուղղայ և ագէտ Հայ անհատք չարունակեն անկարեւոր անձանց և սոցա ընչից դէմ դաւել, և եթէ ապացուցուի թէ նոքա միայն գործիք են հեռաւոր առաջնորդաց, Հայ ազգն, զորոյ փասան դոցա արարք կը վտանգեն, չպիտի վարանի համարձակարար անելէ ինչ որ կրնայ իւր պաշտպանութեան համար։ Այն Հայք որ թէև միացած չէին Հնչակեանց սակայն ցարդ հակամիտ են եղած օտարաց առջեւ արդարացնել յեղափոխական փորձերն և մինչ իսկ տարակուսելի գործերն, պիտի ստիպուին բոլորովին յետս կոչել իւրեանց համակրութիւնն ընդ նոսա և յայտարարել իրողութիւնն թէ Հայ ազգն մասն և բաժին չունի այնպիսի արարից մէջ զորս այն կը դատապարտէ իբրեւ փնասաբերողք իւր թանկ շահուց։ Յուսամ թէ յեղափոխականք կը տեսնեն այսպիսի ուծացման և օտարացման վտանգն իւրեանց գոյութեան և թողլով ի բաց թեթեւամիտ և անչահ եղանակներն կը նուիրեն զիւրեանց մտային և մարմնաւոր այժն աւելի արժանաւոր և ազդու միջոցաց, նպատակ ունենալով գնել գրչաւ և արեամբ զազատութիւնն և զբարօրութիւնն Հայաստանի։

Տեղին զոր «Հայք» ինձ յատկացնել կարող է կ'ստիպէ զիս վերապահել յաջորդ թուոց իմ դիտողութիւններն մեր ազգային այլ պակասութեանց վրայ որք պարզուեցան չնորհիւ վերջին դիպաց։

Փետր. 25, 1895 ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

ՀՐԱՒԷՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՌ ԳՈՐԾԻՉՍ

(Ընդունեցինք հետեւեալ պատճէնն նամակին զոր Փրովիտէնսի Հայերն յղած են առ գործիչս։)

Մեծ. Տիար ...

Տէր,

Փրովիտէնսի հայ գաղութք, 1895 Փետր. 2ին հաւաքուած յընդհանուր ժողով՝ նկատողութեան առինք մեր ազգային նշանաւոր գործիչներու կեդրոնացման հարկը և միաձայնութեամբ քուէարկեցինք հետեւեալը.—

Նկատելով որ Հայաստանի ներկայ ճգնաժամն ազգին գերագոյն ճիգերն և լաւագոյն գործունէութիւնն կը պահանջէ, յուսալով եւ թէ մեր հայրենանուէր գործիչներն այս ահաւոր պարագային մէջ կարծիքի երկրորդական տարբերութեանց չափազանց կարեւորութիւն չտալով՝ միաբան գործունէութիւն մը սկսելու աւելի դիւրամէտ կը գտնուին,—

Կ'որոշեմք յանուն այս ժողովոյ գրել առ Տեարս Մ. Ձերազ, Կ. Ցակոբեան, Կ. Թումայեան, և Հնչակի, Դրօշակի, և Սրմէնիայի (Մարսիլիոյ) յարգոյ խմբագիրներուն և աղաչել որ անկեղծ և ազնիւ ճիգ մ'անեն ի մի վայր գալով խորհրդակցելու և, եթէ կարելի է, ինչպէս մեք կը յուսամք թէ կարելի է, կազմաւորուին իբրեւ Ցանձնախումբ, և խօսին, գրեն, բողոքեն, ապաչեն, դիմումներ անեն ուր և ինչպէս որ անկ է, եթէ ոչ իբրեւ մնայուն Ցանձնախումբ, գոնէ իբրեւ ժամանակաւոր մի Ցանձնաժողով։

Կ'որեշենք որ վերոյիշեալ հայրենասէր գործիչք, եթէ կը հաճին, գրեն մեզ, եթէ մէկտեղ գալ չկրնան կամ միանալու չյաջողին, թէ ինչ արգելք կամ պատճառներ գտնուեցան չյաջողութեան։

Ի դիմաց Փրովիտէնսի ընդհանուր ժողովոյ, մնամք խորին յարգանօք,

Քարտուղար Ատենապետ
Ց. ԲԱՂԱՄԵԱՆ Ց. ՍԱՐԿԱՒԱԳԵԱՆ

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէճիսթը անել նամակն կամ մընի օրտը յղել առ ի ապահովութիւն։

(ՍՏԻՊՈՂԱԿԱՆ)

ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՍ

Լոնտոն, Յունվար 28, 1895

Սասունի կոտորածը զարթուց վերջապէս մարդկութեան խիղճը, Մեծ Տէրութիւնք (մասնաւորապէս Անգլիա) տրամադիր կ'երեւին Պէռլինի Քոնկրէյի 61դ յօդուածը գործադրել։

Ըստ որում անգլիական ժողովրդի ձայնը Բրիտանական կառավարութեան կամքն է, որքան բարձրաձայն ըլլայ ժողովրդեան պահանջը Հայկական խնդրի մասին, այնքան և ազդու և զօրաւոր կը լինի կառավարութեան դիրքը։ Արդ Անկլօ-Արմենեան Միութիւնը յանձն առած է ամեն օրինական միջոցներով, միթինկներ հաւաքելով, հրատարակութիւններ տարածելով, բարձր հնչեցնել անգլիական ժողովրդի ձայնը։ Սակայն այդ ամենը դրամով և անձնուէր աշխատութեամբ միայն կարելի է ձեռք բերել։ Անշուշտ անհնար է ակնկալել Անկլօ-Արմենեան Միութիւնը կազմող անգլիացի անդամներէն թէ եռանդուն աշխատութիւն և դրամական ծանր զոհողութիւն ի նպաստ մեր ազգին։ Մեր Հայերուս Սուրբ պարտաւորութիւնն է ամենայն սիրով հասցնել պէտք եղած դրամը։ Այստեղի Հայերուս ձեռնտուութիւնը բոլորովին անբաւական լինելով և ոչ մի ուրիշ տեղէ դեռ ևս ոչ մի օգնութիւն հասած չլինելով, ձեզ կը դիմենք, Հայե՛ր, յանուն ձեր հայրենեաց յանուն ձեր տառապեալ եղբարց, հասէք օգնութեան այս ճգնաժամուս, զի այժմ և կամ գուցէ երբէք Հայու մահուան և կենաց խնդիրը պիտի վճռուի։ Մեր ձեռնտուութեան չափէն պիտի կախուի Անկլօ-Արմենեան Միութեան գործունէութիւնը, ուստի կրկին և կրկին կը պաղատինք ազգասիրաբար ըստ ձեր կարեաց հասէք օգնութեան առաջնաբար կամ միացեալ, ստորագրեալ կամ անանուն ուղարկելով ձեր լուման ի հաշիւ Անկլօ-Արմենեան Միութեան հետեւեալ հասցէով.

Մնամք Ձերդ ազգակիցք
ՀԱՅԵՐ

MESSRS. HENRY S. KING & Co.
45, Pall Mall, Loudon, S. W.

ՆԱՄԱԿ Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

Պատուարժան Տէր,

Թախանձանօք կը խնդրուի ներկայիս ընդ փոյթ հրատարակուիլ Ձեր ազգանուէր թերթի մէջ։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առ Մեսրով Եպիսկոպոս և առ քահանայս Ադրիանուպոլսոյ,

Թուրք կառավարութեան մէկ պաշտօնական զեկուցում կիմացնէ որ Առ Վեհ. Սուլթանն երախտագիտական ուղերձ մ'ուղղած էք, յորում կը պարտաւէք միանգամայն Հայաստանի ժողովրդին ընդդէմ թրքական բարբարոսութեանց բարձրացուցած բողոքներն, որ հայ արեան ծուխին հետ խառնուած հասաւ մինչև ամենահեռաւոր երկիրներու ժողովրդոց ականջը, և յուզեցին համայն քրիստոնեայ աշխարհին խիղճն ի կարեկցութիւն Հայ մարտիրոսաց։ Այն ժողովուրդ որ զՁեզ ի կարգս պաշտօնէութեան իւր Ս. եկեղեցւոյ բարձրացուցած է և զՁեզ իւր քըրտանց արդեամբ սնուցանելով՝ ամեն պարագայի մէջ Ազգ. իրաւանց պաշտպանութեան համար անձնուիրութիւն կակնկալէր ձեզմէ, այսօր հաւատոյ և հայրենեաց թշնամւոյն դէմ ճակատելով իւր արեան հեղեղներու մէջ մարտիրոսաց պսակը ստացած պահուն, սոսկմամբ և նողկանօք կը դիտէ Սուրբ գործի դաւադիր այն սեւ ոգին, զոր կը պարզէք աշխարհի առջեւ։

Դողացէ՛ք, ուխտադրուժք, այն անէծքէն, զոր եկեղեցին կը տեղայ Ձեր և Ձեր նմաններու վրայ. հակառակ Ձեզ. անիրաւութեան լիրբ խնկարկուներ, իրաւունքը պիտի յաղթանակէ. Հայուն արեւը պիտի ծագի. դուք յայնժամ պիտի փըշրուիք սոսկալի պատասխանատուութեան մը ծանրութեան ներքև յԱտենի Ազգ. դատարանին, ո՛ւր պիտի կոչուիք Ձեր գործոց համարը տալու։ Նախատինք Ձեր ճակտին. անէծք Ձեր հոգւոյն։

Վառնա, 19 Յունվ. 1895 ՏԷՐ ՕՀԱՆ

ՀԱՅԲԻ, ներկայ թուով հրատարակուած Ամեն. Մատթէոս Պատրիարք Իզմիրլեան Հօր Պատկերն մասնաւորապէս տըպուած է մաքուր թուղթի վերայ և կը ծախուի հատը հինգ սէնթի. գնել փափաքողք պէտք է դիմեն հետեւեալ հասցէին M. Daglian, 779 SECOND Ave., New York

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՇԻՐԱԿՈՅԻ

Ամրելի Հայրենակիցք,

Մինչև ե՞րբ իրարմէ պատ պիտի գործեմք։ Արդե՞օք դեռ հասկցած չեմք միութեան զօրութիւն լինելն։ Արդեօք Հայութիւնը այս ճգնաժամէն յարմարագոյն առիթի՞ կ'ըսպասէ միանալու համար։ Արդեօք Սասնոյ մատաղ մանկանց և անբիծ օրիորդաց արիւնը մեզմէ չա՞կնկալեր միացած ուժի մը։ Մինչեւ հիմակուան Հայոցը ցոյցերն ջատագովելի է, բայց գիտնալու եմք որ, թէ ներկայն և թէ ապագայն մեզմէ աւելին կը պահանջէ և զայն միութեամբ միայն կրնամք ձեռք բերել։

Եւրոպական մեծամեծ Տէրութիւնք, Ամերիկայի տարբեր տարբեր քաղաքներ և նահանգներ միացած կը գործեն Հայութեան համար, իսկ Հայերս ցարդ անջատ մնացած եմք։

Արդէն ՀԱՅԲԻ 90դ թուոյն մէջ մեր տեղական Միութեան նպատակը պարզուած լինելով, հարկ չէ հոս կրկնել։ Այլ կրկնակի կը խնդրեմք որ ամեն ընկերութիւն, կազմակերպութիւն և անհատ, բոպէ մը չկորսնցուցած, ջանամք Սասնունի Հայոց արեամբ ներկուած դրօշի տակ միանալով, նախ մենք զմեզ կրթեմք և զարգացնեմք, երկրորդ քաղաքակիրթ աշխարհի բացատրեմք թէ ինչպէս կրօնքի, կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւն Հնար է ի Հայաստան, երրորդ պահանջենք իրենցմէ արդարութեան և մարդկութեան իրաւունքները։

Մեծաւ ուրախութեամբ լսած եմք Ձեր գործունէութեան նկատմամբ՝ վասն մեր թշուառ Հայրենեաց։ Ձեր ցոյց տուած եռանդն արդարեւ մեզ կը քաջալերեն մեր գործունէութեանց լաւագոյն ուղղութիւն մը տալու ջանք մ'անել, աւելի ընդարձակ տսպարէզի մէջ մտնել, մեր ուժերը միացնելով, մեր աւերակ Հայրենեաց վերաշինութեան գործոյն համար։ Զգալով ուժերու միացման կարելիութիւնը և կարեւորութիւնը, զայս յարգանօք Ձեր ուշադրութեան կը յանձնեմք և կը հրաւիրեմք ամեն ընկերութիւն, միու-

թիւն և անհատ միանալ մի ընդհանուր ծրագրի և անուան շուրջ։

Ուստի յատկապէս կը խնդրեմք որ մեր այս յոյժ փափաքելի հրաւէրը, խորհրդածութեան առարկայ ընէք ձեր առաջիկայ ժողովոյն մէջ և կարելի եղածին չափ շուտ որոշման մը յանգելով հաճիք խմացնել մեզ։

Ասոր կազմակերպութեան միքանի կետերու վերայ թելադրութիւններ ընելանտեղի չեմք համարիր։

Ա. կազմուելիք Միութեան կեդրոնը լինի Eastի հայաշատ կեդրոնի յարմար քաղաքներէ մէջն մէջ։

Բ. Ընդունիլ այն ամեն ընկերութիւն, միութիւն և անհատ որ կ'ուզեն միանալ ընդհանուր միութեան իրր մի մասնաճիւղ պահելով հանդերձ իւր տեղական կազմակերպութիւն։

Գ. Երբ այլ և այլ քաղաքաց կազմակերպելի և կազմակերպեալ մարմինք համաձայնին միութեան խնդրոյն, յայնժամ, կը դումարուի պատուիրակաց ժողով մը ուր միութեան պայմանք վերջապէս կ'որոշուին։

Մնամք սպասող յարգանօք ձեր որոշմանց,

Ազգային Միութիւն Հայոց ի Շիքակոյ

Քարտուղար Նախագահ
Յ. ԹՈՒՄԱԵԱՆ Թ. ԽՆԿԵԱՆ

ՄՇԱԿի կը գրեն հետեւեալն.— Սասնոյ անտէր մնացած լեռնցիք յետին ծայր թշուառութեան մէջ են։ Կառավարութիւնը տեսնելով որ ողջ մնացած Սասունցիք իրենց փլատակաց մէջ երկար չեն կարող դիմանալ, այլ տեղն ու տեղ պէտք է սառչին, հետեւապէս և ամօթով կը լինի քրիստոնեայ պետութիւնների առաջ, հաւաքում բոլորին բերում է ի Մուշ՝ հայ գիւղօրէից վրայ բաժանում։ Գիւղերից շատերն մեծ սիրով են յանձն առնում այդ բեռը, բայց տարաբաղդաբար, մի քանիսն էլ չեն յօժարանում լեռնցւոց պահելու կառկածելով ապագայ արկածից։ Այսօր Մշոյ գեղջկական թոնիրի շուրջ նստոտել, կրծում են կորեկէ չոր հացի պատառը Սասունցի և դաշտեցի մանուկները։ Սարսափելի՜ վիճակ, Մշեցին ինքն է մուրացիկ, ընդհակառակն օրական 10 մուրացիկ նորա դուռն են գալիս բան աղերսելու։

ՆԱՄԱԿ ՊՈՍԹՈՆԷՆ

Տէր խմբագիր,

Պոսթոնի և շրջակայի հայ երիտասարդութիւնը միշտ հետաքրքիր և յոյժ հետամուտ եղած է գիտնալու թէ Ամերիկայի և Եւրոպոյ այլ քաղաքաց մէջ Հայ դատը օր քան օր առաւել ուշադրաւ և Սասնոյ կոտորածը առաւելապէս յուզիչ համեմատութիւն կ'ստանա՞ դահլիճներու և մանաւանդ հանրային մտաց առջեւ։

Համարձակութեամբ կ'ասեմք թէ տեղւոյս Հայք միայն հետաքրքիր և հանդիսատես եղած չեն, այլ իրենց միջավայրին և ձեռնհասութեան հաւասար գործունէութիւն ցոյց տուած են և կ'արժէ այս մասին քանի մը խօսք ասել ի գոհացումն այնոցիկ որ ոչինչ նուազ հետաքրքրութեամբ կը բաղձան գիտնալ թէ Ամերիկեան Ամէնքի մէջ Հայք ինչ՞ արած են և կանեն։

Այլ նախ քան զայս մի կարճ և ճշդամերձ վիճակագրական տեղեկութիւն հարկ ու օգտակար կը համարինք։

Ասկէ դեռ 7—8 տարի առաջ հազիւ 7—8 Հայեր կարելի էր գտնել Պոսթոնի և արուարձանաց մէջ, մինչդեռ վերջին 4—5 տարիներու մէջ արագ աւելնալով, այդ թիւը այսօր 4—500ի հասած կը կարծուի, սակայն այս մեծկակ թուոյն մէջ միայն 12 ընտանիքներ կան, որոց կէսը Ամերիկուհիներու հետ ամուսնացած են։

Թէև ատ ևս Հայք մեծաւ մասամբ գործաւոր են, սակայն ստոյգ է նաև վերջերս տեղական թերթերու մէջ տեսնուած այն ջատագովութիւնը թէ Հայք գործօն, ճարպիկ և ճարտարաւոր ժողովուրդ մ'են և քաղաքիս մէջ կան հոյ գործարանատէրներ, վաճառականներ, նկարիչներ, լուսանկարիչներ, փորագրիչներ, գծագիրներ, ուսանողներ, բժիշկ, ատամնագործ, սղագիր, ևն։

Նշանակութեան արժանի է այն ևս թէ վերջերս տեղւոյս Հայք աւելի հետամուտ և ձեռնամուխ եղած են առևտրոյ, և կարելի է ասել թէ շատերը յաջողած են առաւել կամ նուազ։

Պոսթընի Հայութիւնը իրաւունք ունի պարծենալու թէ համեմատաբար աւելի ուսեալ երիտասարդութիւն մի և Հայաստանի ամեն կողմերէն ներկայացուցիչներ ունի յորս Խարբերդցին, Ակնցին և Արաբ-

կերցին ըստ կարգի մեծամասնութիւն կը կազմեն։

Սկզբանէ անտի և մանաւանդ վերջին 2—3 տարիներու ընթացքին մէջ Պոսթընի Հայք ունեցած են ազգային ընկերութիւններ և բաւական կանոնաւոր և բարեկարգ ժողովներ, որոյ շնորհիւ մասնաւորաց մէջ յայտնուեցան և բաւական զարգացան ատենաբանի և վիճողի կարողութիւններն, իսկ ընդհանրութիւն ցոյց տուաւ բարձր աստիճանի տրամադրութիւն լսելու և ընդունակութիւն լրջօրէն խորհելու գգալու և մշակելու անհատական և հաւաքական բարւոք յարաբերութիւններ։

Մանաւանդ Սասնոյ մասին հասած ազեկտուր լուրերէն ի վեր արտասովոր յուզումն որ տիրած էր անխտիր բոլոր Հայոց, սկսաւ տենդագին գործունէութեան նոր շրջան մը. ոչ մի ժամանակ Հային սիրտը այնքան ուժգին բաբախած, Հային քսակը այնքան լայն բացուած, Հային անձնուրացութեան այնքան ուռատ ապացոյցներ տրուած և ամենակերպ զոհողութեան յօժարութիւն ցոյց տրուած էր որչափ այս վերջին 2—3 ամիսներին մէջ։ Ժողովուրդը շարժել հարկ չէր, ժողովրդային կամաց և կարեաց վայրաշարժը լիաշոգի կ'արշաւէր արդէն, եթէ կար մի բան այն ալ այդ մթերեալ և պատրաստ ուժը, օգտակարագոյն և միայն ի նպատակ գործածելու խնդիրն էր. զգացմանց հրդեհը բարձաւ ի միջոյ գաղափարի և կուսակցական պայքարը, զգացմանց հոսանքը ողողեց շատ մը ամայի և անապատ սրտեր, կենսաւէ՛տ ողողում. քան օրհնեալ Նեղոսի յորդումնքն քանիցս վեհափառ ես դու։

Ասա կը հրաժարինք յիշել սոյն երանաւէտ շարժման քանի մը պարագաներն և մասնաւոր արդիւնքներն զի հարկը այդպէս կը պատուիրէ։

Այժմ նկատենք թէ Հայք իրենց շրջանակէն դուրս ինչ՞ արած են և կ'անեն, ասա կարելի ու ներելի է աւելի համարձակ խօսիլ։ * * *

Ճօն Ճ. Բունի Նիւ Եորքցի փաստաբանն արժանի է հրապարակային շնորհակալութեան վասն այն երկու կամ երեք ընտիր հերքողականներուն զորս հրատարակեց Թրիպիւնի մէջ ընդդէմ խայտառակ Հէրալտի։

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳԻՐՆ

Եւրոպա, Փետր. 8 1895

Մեծ. Խմբագիր,

Բարիզի, Լոնտոնի, Մարսիլիոյ Հայեր անչշուկ կ'աշխատին։ Նաև բաւական յուսալից են։ Բայց մեր Ամերիկայի Հայերն թող չմնան դիակի պէս և ոպասեն ուրիշներու։

Հնչակի տպարանն ալ այցելեցի Լոնտոն. բաւական թուով թշուառներու հանդիպեցայ հոն։ Թշուառներ որ չգիտեն լոյսն ի խաւարէ զանազանել. չգիտեն ուր կ'երթան, յազատութի՞ւն թէ ի կորուստ։ Մարդ չէ կրցած հասկնալ դեռ թէ տըրուած ստակներն որո՞ւ համար տրուած են, ուսկի՞ց մտած են և ուսկի՞ց ելած։ Բայց այս բանը չհասկցած լինիլն ալ, ըստ ինձ, ամեն բան հասկցած լինիլ է։ Ի քիչ գրոյս շատ իմացէք։

ՀԱՅՐԻ ծրագիրը որ այնքան երկար ատենէ ի վեր ժողովրդի առջեւ դրուած է, այսօր ամեն տեղ և ամենուն բերնէն կը ջատագովուի։ Միայն մէկ կէտի մասին դիտողութիւն կ'անեն, և այն է թէ դուք կ'ուզէք որ վերջապէս ձեր թերթ բերան ըլլայ այդ կեդրոնական միութեան։

Իրաւ է թէ մենք Եւրոպացիէ ամեն բան կը մուրանք, փոխանակ նախ մեր կարող անձնաւորութիւնները մուրալով գտնելու, իրարու մօտ բերելու և ներքին ոյժերը կազմակերպելու։ Այս բանին համար կարծես թէ ամենն ալ միջնորդի կը սպասեն։ Միութեան մօտեցողներ շատ կան։ Հաճեցէք ընդունիլ սիրոյ ողջոյնս։

ՍԱՆԻՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

«ՀԱՅՐԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Տիար Ա. Ց., Ռէշթ, Պարսկաստան.— Ձեր ա. նամակին պատասխանած եմ. ՀԱՅՐ կը յղուի ձեզ կանոնաւորապէս։

Տիար Ց. Ն., Ֆրէզնոյ.— Դուք սխալ հասկացած էք «Հայքի» այն համառօտ ակնարկութիւնն։ Ներկայ թուոյ մէկ խմբագրականի մէջ կը գտնէք ձեր հարցի պատասխանն։

Տիար ՍԱՆԻՄ.— Ձեր ուղածներն յղեցի։

ԹՐՔԱՑ ԴԷՄ

ԶԱՅՐԱՑՄԱՆ ՄԻԹԻՆԿ

Ի ՀՕԼԻ ԷՓԻՍԿՊԱԼՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Փեբր. 24ի կիրակի երեկոյին տեղի ունեցաւ այս ժողով որոյ առաջին մասն եպիսկոպոսական եկեղեցւոյ սովորական պաշտամունքն էին։ Բազմութեան մէջ կը գտնուէին մի քանի հարիւր Հայեր, սակայն աւելի ազգուողներն անտարակոյս Ամերիկացիներն էին որոց մեծ մասն առաջին անգամ կը լսէր Հայոց և Հայաստանի վերայ։

Եկեղեցւոյն վարդապետ Տէր Պէքըս համառօտ ատենախօսութեամբ մի ներածեց նիւթն, յիշելով Հայաստանի հին և պատմական երկիրն, գետերն, Արարատն, եկեղեցին և գրականութիւնն։

Առաջին ատենախօսն էր գնդապետ Ալէքսանդր Պէյքըն, որ զինուորականի մի վայելուչ եղող կորովով խօսեցաւ՝ գովելով զՀայս, պարսաւելով զԹուրքս։ Ինքն Թուրքիա այցելած լինելով՝ կը ճանաչէր երկրին ժողովուրդներն։ Եթէ Թրքին հարցնես թէ դուք սուտ կը զրուցէ՞ք,— «անշուշտ», կը պատասխանէ, «ինչպէս ունի՞»։ Եթէ հարցնես դուք կը սպանանէ՞ք. կը պատասխանէ— չուն սպաննել մեծ մեղք է, բայց կեավուռներն սպաննել զէն չունի»։ Ապա բաղդատեց Թրքերուն հետ հայ ժողովուրդն, աշխատասէր, գթած, կըրթուած և յառաջադէմ։ Մենք կը կարծենք թէ նահատակներն հին դարերուն մէջ միայն կրնային լինիլ և կը սխալինք, ահա 1894ին Հայաստանի մէկ գաւառն աւելի նահատակներ հանեց իւր ծոցէն քան անգութն Նէրոն կրցաւ տեսնել իւր բոլոր կեանքին մէջ։ Կարելի՞ է մեզ այսպիսի ժողովրդի մի չհամակրիլ սքանչանօք։

Երկրորդ և վերջին ատենախօսն էր «Հայքի» խմբագիրն, որ Նախ կարդաց Հայաստանի մէջ Ամերիկացի միսիոնարներու ձեռքով պատրաստուած տեղեկագրէն կարեւոր մասեր։ Ունկնդիր Ամերիկուհիներ չէին կրնար զսպել իրենց բացագանչութիւններ— «սոսկալի՜ է»,-«Ահ»,-«Ահաւո՜ր է»։ Ցայտնի կը տեսնուէր նաև իրենց դէմքէն թէ որքան կը քստմնէին իլուր այս խժդժութեանց։ «Կը տեսնէ՞ք» ասաց ատենախօսն «այս տեղեկագրէն թէ Սասնոյ մէջ ապստամբութիւն չկար, և թէ Թուրքըն անգթութեան վերայ ստութիւն կը յաւելու երբ կը յայտարարէ թէ պարզապէս ապստամբութիւն մի զսպեց։ Կը տեսնէ՞ք նաև թէ տեղական իշխանութիւնք շարժած են ըստ կայսերական հրամանի, և թէ, հետևապէս, տղայական կը լինի սպասել որ Թրքական Ցանձնաժողովն ի վեր հանէ Թրքական բարբարոսութիւններն։ Կը տեսնէ՞ք, վերջապէս, թէ Հայ գիւղացին ինչքան դիւցազնօրէն անձնուէր է իւր ընտանեաց, և հայուհին՝ իւր քրիստոնէական հաւատոյն։ Մեղք չէ՞ այսպիսի ժողովուրդ մի թողուլ այնպիսի խուժադուժ մոլեռանդներու ձեռքն։ Չէ՞ք կարծեր թէ դուք Ամերիկացիքդ ալ պարտաւոր էք բան մ'անել այս մասին։» Ապա ատենախօսն հերքեց Մընրօ վարդապետութիւնն որ կը տրամադրէ միջամուխ չլինիլ միջազգային խնդրոց Եւրոպիոյ. հաստատեց թէ Ամերիկայի Միացեալ Նահանգք քրիստոնեայ պետութեանց հզօրագոյնն է և ազգաց քան զամենայն ազատն, և հետևապէս իւր պատասխանատուութիւնք հաւասար են իւր զօրութեան. և ցոյց տուաւ թէ ոչ միայն պատշաճ այլ և պարտ է այս մեծ ազգին՝ աջակցիլ Եւրոպիոյ ի փրկութիւն Հայաստանի։

Ապա Տր. Պէքըս կարդաց որոշումներ, որք քուէարկուեցան ժողովրդէն, և յետ ժողովոյն ստորագրուեցան նշանաւոր արանց, տիկնանց և օրիորդաց կողմանէ, յղուելու համար Ուշինկթըն և Անգլիա։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Լոնտոն Փեբր. 20— Կ. Պոլսէն կը հեռագրեն Սթանտարտին թէ Բնիչ Ցանձնաժողովոյ առջեւ վկաներ յայտնած են թէ իրենք ականատես եղեր են տղայոց ջարդուելուն։ — Հիւսիսային Սիւրիոյ Տըրոն զներն խռովայուզութիւնն կը շարունակեն։ Անցեալներ Հուրան գաւառակի միւտիրին վերայ յարձակելով ստիպած են զինքն փախչիլ ի Դամասկոս։

Լոնտոն Փեբր 21.—Տէյլի Նիւզի կը հեռագրեն թէ Փեդերպուրկի պաշտօնական շրջանակաց մէջ կուրանան այն լուրն թէ Զարն մերժեր է Հայոց կաթողիկոսն ընդունիլ։ Նաև կ'ասեն թէ Վանի և Կար-

նոյ ռուսական հիւպատոսաց ծանր տեղեկագրութեանց վերայ՝ Ռուսիա կայսերական պատուիրակ մի կարգած է քննելու այն խժդժութիւններն որք կը կատարուին եղեր Թրքական բանտից մէջ։

Լոնտոն, Փետր. 22— Տիար ճիւէթ, Միացեալ Նահանգաց հիւպատոսն ի Սեբաստիա, նամակաւ մի հերքած է Ամերիկայի ծերակուտականի ուրումն այն խօսքն թէ Բ. Դուռն մերժեր է Տ. ճիւէթի քննութիւն կատարելն ի Հայաստան անոր համար որ Տ. ճիւէթի կինն հայուհի մ'է։ Նորա կինն հայ չէ։

Լոնտոն, Փետր. 26— Տէյլի Թելեկրաֆքն Փետր. 23 թուով հեռագիր մի կը հրատարակէ Մուշէն յորում կը պատմէ Թղթակիցն իւր քննութեանց արդիւնքն։ Կէլիկիզէնի մօտ տեղի ունեցած ջարդին մէկ միջադէպն կը յիշէ, յորում 360 Հայեր՝ ամեն հասակէ և երկու սեռէ՝ խողխողեցան ի Թուրք զօրաց որք համոզեր էին զնոսա անձնատուր լինել ընդ խոստմամբ պաշտպանութեան։ Մեռածներն ու հոգեվարքներն լեցուցին խորունկ փոսի մի մէջ։ Հեռագիրն եկած է Ռուսական Թելերով Կարսի ճանապարհով։

Լոնտոն Փետր. 18.—Կարնոյ Իտալական հիւպատոսն հեռագրած է իւր կառավարութեան թէ ինքն հաստատած է ջարդին իրականութիւնն ի բերանոյ ականատես վկայից։

Լոնտոն, Փետր. 24— Տէյլի Կրաֆիքն հետևեալ պոլսական հեռագիրն կը հրատարակէ։ Բոնիչ Ցանձնաժողովոյ ներկայացող վկայից մին ցոյց տուաւ վէրքեր զորս, ըստ իւր ասից, Թրքաց սուիններէն ընդուներ է։ Թուրք զինուորական վիրաբուժներն տեղեկագրեցին թէ վէրքն այրածի հետևանք էին։ Առաջի այս անհամաձայնութեան՝ Ցանձնաժողովն հարկ համարած է որ կառավարութեան հետ պաշտօնական առնչութիւն չունեցող վիրաբոյժ մի քննէ վէրքն։

Տեարք Սթիֆքնսըն (Անգլեհայկական ընկերակցութեան նախագահ), Էթքին և Ջերազ ի միասին Էտինպուրկ գնացեր են Սկովտիացւոց ուշադրութիւն Հայկական Խնդրոյն հրաւիրելու համար, և չորս օր անցուցեր են այլ և այլ հրապարակային ժողովներ անելով։

Ն. Ե. Հէրալտի յատուկ Թղթակիցն կը հեռագրէ Կ. Պոլսէն թէ Թուրքիոյ բոլոր կրօնական հասարակութեանց մէջէն ա՛յն որ Սուլթանին յարգանքն ու վստահութիւնն գերազանց չափով կը վայելէ, է՝ հայ կաթոլիկ ժողովուրդն, և այս արդիւնք է Ս. Պապին իմաստուն խրատուց։ Նաև կը տեղեկանայ թէ կաթոլիկ Հայոց Պատրիարքներէն ոչ մին կաթոլիկ աշխարհի բարձր համարումն այնքան լիուլի վայելեր է որքան Ս. Ազարեան՝ ներկայ Պատրիարքն Կիլիկիոյ։ (Կիլիկիո՞ց)։

Հռովմէն Ն. Ե. Հէրալտի Թղթակիցն կը հեռագրէ թէ տեսնուելով կարտինալի մի հետ՝ ստուգած է թէ Սուլթանն արդարեւ խնդրած է Պապէն ապացուցանել Եւրոպիոյ Տէրութեանց թէ կոտորած չէ եղած ի Սասուն, այլ միայն օրինաւոր զսպումն։ Պապն մերժեր է զայդ անել։ Սակայն և այնպէս, կը յաւելու պապացուն, Լէօ ԺԳ ստիպուած է բարեկամական յարաբերութիւն պահել Թուրք կառավարութեան հետ, որովհետեւ նորա աջակցութեան կարօտ է իւր ծրագիրն իրագործելու համար նկատմամբ արեւելեան եկեղեցեաց։ Բարձրաստիճան եկեղեցական մի ևս ծանոյց ինձ թէ Պապն կը ցանկայ թէ՛ Սուլթանին և թէ՛ Հայոց գոհացումտալ, ինչ որ քիչ մի դժուար է։ Նա չուզեր և չի կրնար յայտնապէս Սուլթանին դէմ ելնել։

Նոյն թերթին կը հեռագրէ Կ. Պոլսոյ Թղթակիցն. «Գրիգորեան կամ բողոքական (բողոքակա՞ն) Հայերն, որք իրենց նախորդ պատրիարք Աշըդեանն գահընկէց արին, և ընտրեցին Ս. Իզմիրլեան, կը թուին ունենալ ծանր վէճ մ'իրենց մէջ։ Կաթոլիկ Հայերն, սակայն, այսպիսի վէճերէ կը խորշին և իրենց ներքին կրօնական գործերուն համար Սուլթանին ձանձրոյթ տալ չեն ուզեր։

(Մեր ընթերցողաց համար շատ մութ կետեր կը լուսաբանուին եթէ իրենց ծացանեմք թէ Ն. Ե. Հէրալտ, որ տխրահռչակ հանդիսացաւ Սասնոյ գործերուն առթիւ, կաթոլիկ թերթ մ'է, և անոր համար ալ իւր Թղթակիցներն կը ջանան արդարացունել Ազարեանի ընթացքն, և բողոքական կը կոչեն բոլոր Հայերն ի միասին, թէ՛ բողոքական և թէ լուսաւորչական, իբր Պապի հոգեւոր իշխանութիւնն մերժողներ։)

Տ. ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ, Ն. Ե. Թրիպլէնի փետր. 21ի թուով նամակ մի կը հրատարակէ ցուցնելու Հայկական Խնդրոյն փըչուռութիւնն և մեղադրելու զայնս (մանաւորապէս ակնարկելով Ն. Ե.ի մրագիր Հէրալտին) որք վաղվաղկոտ և անխորհուրդ կերպով կը դատէն զայն, եթէ ոչ չարամիտ կողմնակալութեամբ։

Տ. ՏԷՐՏԷՐԵԱՆ Պոսթոնի Լ'Իւնիօն Գօնգրինանգալ չաբաթաթերթին մէջ յօդուած մ'ունի «Քրիստոնեայ Հայաստանի» վերայ։

Թեհրանում հրատարակուող «Շուրիզ» չաբաթաթերթն որ, շատ հաճելի յատկութիւններ ունի, «իրմէ անկախ պատճառներով» ինքզինք անկարող լինել կը յայտարարէ ո և է լուր տալու կամ խորհրդածութիւն անելու այն հայկական յուզմանց մասին որով բոլոր աշխարհն զբաղեր է։

Ֆիլատէլֆիայէն կը գրեն մեզ.— Քաղաքիս հայ գաղթականութիւնը Ամերիկի ուրիշ հայ գաղութներէն տարբեր է։ Ամենը ժողով կ'ընեն, կը խօսին ազգի վիճակին վրայ, և այնպէս ձեռնարկութիւններ կ'ընեն, և ոմանք քիչ ոմանք շատ կը յաջողին. բայց Ֆիլատէլֆիացիքս տասնի բաներ չենք ըներ։ Անցեալ օր ժողովի հրաւիրուած էինք, գնացինք տեսանք թէ միայն հինգ հոգի ներկայ է։ Բարբարոսները ժողով ունին, քաղաքակիրթներն ալ ունին. կ'երեւի թէ մերինները դեռ անծանօթ միացած տեսակի կամ աստիճանի մի կը վերաբերին։

Լինէն կը գրեն մեզ փետր. 23ին.—Ձեր այս տեղ այցելելէն ի վեր զուարճալի երեւոյթ մը տեղի կ'ունենայ ժողովներու մէջ և տներում։ Արդէն ՀԱՅՔի խմբականը բաւական ըմբռնողներ ունէր մեր մէջ, և ձեր ատենախօսութիւնն ալ որպէս թէ ահագին զամով մը մեր հոգիներուն մէջ կռանելով հաստատեց այդ խմբականը։ Հիմա քանի մը խեղճ երիտասարդներ բոլոր ճիգ կը թափեն զամը քաշելու, և իրենց եղունգները միայն գործիք ունենալով՝ արդահատելի տեսարան մի կը պարզեն. զամը չի շարժիր, եղունգները կը կոտրտին։ Այս ողորմելի եղբայրները կը կարծեն թէ ճանկռտելն ալ ճառել է։ Եւ երբ ոչ ոք կը զիջանի իրենց պատասխանել, չեն մտածեր թէ պատասխանի արժանի բան մը ըսած չունին։

Շիքակոյէն կը գրէ մեզ Թղթակից մի.— Հոս 400 եկեղեցի կայ և մեր Հայոց Ազգային Միութիւնն պաշտօնապէս գրած է երէցներուն երթալ եկեղեցիներն և Հայոց կոտորածի մասին ձրի լեքչըրներ տալ. շատ եկեղեցիներ հրաւիրեցին և գրեթէ ամեն կիրակի տեղ մի կը խօսիմք։

Հ. Ա. Մ. ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՄԻՆ

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվէնիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. **$3** a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, **25** cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, **361** BROADWAY.

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10դ Փողոց
5դ Էվինիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր.

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK.
ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու ֆօթօկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30 սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ գնով գրել հետեւեալ հասցէին.
H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՆՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՝ ժամանակ գնով պիտի առնեն և թէ՝ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ժամանակով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ժամանակ կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ասոր ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ